Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.07.2020թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Սարիբեկյան
Լ. Խալաթովա
Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Շ. Իսախանյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հուլիսի 1-ին, ժամը 11:30-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Չափա բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեք	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7	8
1	Կենցաղային սառնարաններ	<<Յե Էս Թրեյդ>> ՍՊԸ	200 000	110 000	12 000	24 400	146 400
		<<Արարատ Բադալյան Սերգուշի>> ԱՁ		143 920	35 980	0	179 900
2	Օդորակիչ	<<Բարսիս>> ՍՊԸ	320 000	252 976	30 357	56 667	340 000
		<<Էյչ վի էյ սի Սերվիս>> ՍՊԸ		260 000	40 000	60 000	360 000
3	Գունավոր տպիչներ	<<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ	585 000	450 000	21 800	94 360	566 160
		<<Նորմա-պլյուս>> ՍՊԸ		438 000	44 500	96 500	579 000
		<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ		437 170	48 580	97 150	582 900
		<<Միկրորինգ>> ՍՊԸ		477 500	9 000	97 300	583 800

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումասիրության արդյունքում պարզվել է, որ

ա) <<Արարատ Բադալյան Սերգուշի>> ԱՁ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ (հավելված 1.1) նշված չեն ապրանքի ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշված <<սառեցման աստիճանը (Ց)՝ առավելագույնը -18°>> չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին <սառեցման աստիճանը (Ց)՝ առավելագույնը -16°>>: Մասնակցի կողմից չի ներկայացվել նաև հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

բ) <<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ (հավելված 1.1) նշված չէ ապրանքի ֆիրմային անվանումը: Մասնակցի կողմից չի ներկայացվել նաև հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

գ) <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ (հավելված 1.1) նշված չէ ապրանքի ֆիրմային անվանումը:

դ) <<Էյչ վի էյ սի Սերվիս>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1):

ե) <<Յե Էս Թրեյդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ (հավելված 1.1) նշված չէ ապրանքի ֆիրմային անվանումը: Մասնակցի կողմից չի ներկայացվել նաև հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

զ) <<Բարսիս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ (հավելված 1.1) <<ֆիրմային անվանումը>>, <<ապրանքային նշանը>> և <<մակիշը>> դաշտերում նշված է միևնույն անվանումը: Անհրաժեշտ է յուրաքանչյուր սյունակում լրացնել դրանց վերաբերյալ հստակ տեղեկատվությունը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և ծանուցել վերը նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

<<Յե Էս Թրեյդ>> ՍՊԸ-ն արձանագրված թերությունների շտկման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ներկայացրել:

<<Արարատ Բադալյան Սերգուշի>> ԱՁ-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

<<Էյչ վի էյ սի Սերվիս>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

Մյուս մասնակիցների կողմից շտկումները ներկայացվել են սահմանված ժամկետում:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ <<Յե Էս Թրեյդ>> և <<Էյչ վի էյ սի Սերվիս>> ՍՊԸ-ների, ինչպես նաև <<Արարատ Բադալյան Սերգուշի>> ԱՁ-ի հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել են:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպվող բանակցությունների հրավիրելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Հաշվի առնելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և 2-րդ չափաբաժնի մասով ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված **<<Բարսիս>> ՍՊԸ-ին** առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 9-ին ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած հայտարարելու և 3-րդ չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը հայտերը գնահատել է հետևյալ կերպ.

1-ին չափաբաժին - կենցաղային սառնարաններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Յե Էս Թրեյդ>> ՍՊԸ	անբավարար
2	<<Արարատ Բադալյան Սերգուշի>> ԱՁ	անբավարար

3-րդ չափաբաժին - գունավոր տպիչներ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ	բավարար
2	<<Նորմա-պլյուս>> ՍՊԸ	բավարար
3	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ	բավարար
4	<<Միկրորինգ>> ՍՊԸ	բավարար

3.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել <<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ-ին:

Չափաբաժնի համարը	Գնման առարկա	Ընտրված մասնակից	Հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներ
3	Գունավոր տպիչներ	<<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ	1. <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ 2. <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ 3. <<Միկրորինգ>> ՍՊԸ

3.3 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ <<Ստարտ կոպի Գրուպ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

5. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

5.1 2-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 9-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Լ. Սարիբեկյան

---------- Լ. Խալաթովա

---------- Կ. Բարսեղյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան